

ԱՅՑ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(հայ տուրիստի յիշողութիւններէց)

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՅԻ

(նարեանակութիւն ¹)

IV.

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

Առաւօտ կանուխ սենեակիս դրան ուժգին բաղխումները զարթեցրին ինձ: Զիապան Սիմօնը, մշեցի ծառայ հաջի-Ղազարը և Յովհաննէս աղան մտան սենեակս, հաւաքեցին իրերս և տարան բեռնելու:

Դեռ նոր էր լուսացել, երբ ես բարձրացայ ընթերցարանը թէյ խմելու և հաշիւներս վերջացնելու: Ոչ ոք չը կար այնտեղ, բացի Մուրադ Էֆէնդուց:

Երբ իջայ վաչր, արդէն հիւրանոցի դարպասների առջև կանգնած էր հետաքրքրուողների մի խումբ և անց ու դարձ էր անում ցերեբներից միւսը՝ Ալին:

Զիապանս իւր երկու ձիերից մէկի վերայ բարձել էր փոքրիկ բեռնը ու միւսի՝ իմ հեծնելու ձիուս՝ «սեմարը», որի փոխարէն դրած էր թամբը:

Յիւել էր ինձ ընկերանալու և մի վանեցի վաճառական, որ Պօլիս էր դնում: Նա վարձել էր մի ձի, որի վերայ բարձել էր իւր երկու ահադին չլալները, կապոցները ու ինքն էլ փառաւորապէս

¹ Տե՛ս «Մուրճ»-ի 4, 5, 7, 9 և 11 համարները:

բազմել այդ բոլորի վերայ: Նրա հետ էր և նրա ձիատերը՝ կաթրչի Յովհաննէսը:

Տալով ծանօթներիս վերջին հրաժեշտը, ես հեծայ բեռնակրութեան ընտելացած լիսկլիկան նժոյգս ու ճանապարհ ընկալ անհիւրընկալ Կարինից Տրապիզոն:

Յուրտ օր էր. գետինը սառել, շուրջը ձիւն, օդը մառախլապատ: Մեր փոքրիկ խմբի առջևից գնում էր ձիապանս քաշելով յետևից բեռնած ձին, յետոյ ես էի, ապա վանեցին, իսկ նրա կողքից քայլում էր նրա ձիատերը: Մառախուղի միջից Մեֆիստոֆէլի պէս հեռուից հետևում էր մեզ Մուրադէֆէնդին: Մենք դիմում էինք քաղաքի արևմտեան դռները:

Ահա՛ և պարսպների կամարակապ անցքը, որի առջև կանգնած են երկու զինւորներ: Մօտակայ փոքրիկ տնակից դուրս եկան ճանապարհը երեք տաճիկ պաշտօնեաներ պապղուն դեղին կոճակներով: Հասնելով նրանց, մենք կանգնեցրինք մեր ձիաները: Ես մեկնեցի նրանց երկու անցաթուղթս էլ:

— Նեղութիւն մի՛ քաշէք, էֆէ՛նդմ, թղթերը մեզ չեն հարկաւոր. մենք «բախշիչ» ենք ուզում, որպէս զի ձեզ բարի ճանապարհ ցանկանք, ասացին շողոքորթ ձայնով պաշտօնեաները:

Ես տւի 200 փարա (50 կոպ.) էֆէնդիներին և նրանք ձեռները տարան դէպի գետինը, յետոյ շրթունքները ու կպցրին ճակատներին՝ յարգանքով «Ալլահ բարաքեաթ վերսն» ասելով: Ես հետաքրքրութեամբ նայում էի թէ վանեցին՝ որը, ի հարկէ, տեղական սովորութիւնները ու պահանջները աւելի լաւ գիտէր՝ ո՞րքան կը տայ այդ էֆէնդիներին: Մեծ էր զարմանքս, երբ տեսայ որ այդ վաճառականը առատաձեռնութեամբ հանեց քսակից... 20 փարա (5 կոպ.) և տւեց պատուելիներին, որոնք դո՛հ լինելով և այդ նւէրից, այլ ևս մեզ չը պահեցին և մենք մի քանի վայրկեանից յետոյ արդէն պարսպների միւս կողմումն էինք:

Կրկին բացւեց առջևս Բարձր-Հայքի միաօրինակ տխուր բնութիւնը. նոյն ծառազուրկ, ամալի, խտտատես լանդշաֆտը, որ տեսանք դեռ Ալէքսանդրօպօլից սկսած: Այդ միաօրինակ լանդշաֆտը աւելի ևս տխուր կերպարանք էր ստանում ձիւնի սպիտակ սաւանի տակ, որի միջից տեղ տեղ սևին էին տալիս հեռաստանում հողա-

կոյտները նման թուփ-թուփ դիզած գիւղական խրճիթները: Մեռելութիւն ու թշուառութիւն, կարծես, ծանրացել էին այդ աշխարհի վերայ...

Բաւականին խանգարւած խճուղու վերայ պատահում էին խումբ խումբ տաճիկ ու հայ գիւղացիներ, որոնք հազուստով ոչնչով իրարից չէին տարբերւում: Միմիայն հայկական մեծ մեծ, հեզ և թախծալից աչքերն էին, որոնք զանազանում էին բնիկ հային եկեօր տիրապետող տաճիկից: Նոցա նահապետական սալները՝ լծած եզ ու գոմշուկներով, բարձած խոտ, աթար ու դարմանով (սաման)՝ օրօրւելով ու ճռճռալով քաղաք էին դիմում:

Մի քիչ էլ հեռացանք Կարինից և մեզ պատահեցին կաթրչիների քարւաններ, ապրանքներով բեռնւած 30—40 ձի իրանց լազ տէրերով: Այդ անունը ընդհանրապէս տալիս են լազստանցիներին, չորոշելով իսկական լազին լազստանցի տաճիկից, յոյնից և հայից:

Իմ ուղեկիցներիցս, ինչպէս ասացի, մինը վաճառական էր և երկու ձիապանները՝ հայ լազեր:

Վաճառականը Վանի մօտ գտնւող Ալիւր գիւղիցն էր, մօտ 36 տարեկան մի փոքրահասակ կլորիկ մարդ, կարմիր և իւղով քսածի պէս փայլուն, ածիլած դէմքով, կապոյտ աչքերով և խարտեաշ բեխերով: Նրա անհանգիստ աչքերը և սուր ծնօտը այնպիսի արտաշայտութիւն էին տալիս դէմքին, որ կարծես այդ մարդը միշտ ինչ որ ուշադրութեամբ լսում լինէր կամ աշխատում ուրիշի երեսին կարգալ նրա խորհուրդները: Դէմքի այդ մշտապէս հարցնող արտաշայտութիւնը նրանից էր, որ Մ. աղան, երկու ականջով էլ ծանր լինելով, սովորութիւն էր արել աւելի խօսողի շրթունքների շարժումից, քան ձայնից բան հասկանալ: Մ. աղան հազած էր մոյզ-կարմիր կոպիտ չուսացից անձոռնի կերպով ալաֆրանկա կարած շորեր, իսկ գլխին դրած էր կարմիր ֆէս, որի շուրջը ճակատին փաթած թած ունէր մի հին թաշկինակ: Ուսերին նա ձգած էր բեղինի մի վերարկու:

Վանեցու ձիապանը մի երկարահասակ, իրանը և գլուխը միշտ ուղղահայեաց բարձր բռնած, մօտ 35 տարեկան մի հայ լազ էր, որի ինքնավստահ խոշոր քայլւածքը ու խրոխտ դէմքի արծիքիթը, թուխ խիտ յօնքերի տակից վառւուռն, միշտ պատրաստ

բարիութիւնից շանթի պէս փալատակելու աչքերը ու զուրս պրծած ստորին ծնօտը՝ արտայայտում էին մի անգուսպ, դիւրագրգիռ, ուժեղ բնաւորութիւն։ Նա սիրում էր մի մի անգամ պարծենալով պատմել, որ ինքն էլ է եղել Ռուսաստանում, Կերչ ու Սիմֆերոպօլի կողմերում։ Այդ պատճառով նա իրան աւելի լուսաւորած էր համարում և սիրում էր ուսներէն բաւեր գործածել, ուսն աղջկանց մասին խօսել և մինչև անգամ երգել։

«Այն զաչէմ, զաչէմ վի մէնէ զարիւ....»

Միւս հայ-լազը դեռ շատ երիտասարդ էր և իւր կեանքում Տաճկաստանից զուրս չէր եկել։ Նա հազիւ 20 տարիքին հասած, միջին հասակից բարձր, լայն, լիք թիկունքներով, հաստ ջլոտ բազուկներով և ուժեղ, վայելուչ կազմւածքով մի երիտասարդ էր, որի գլխին առանձին կերպով փաթաթած ու ծոծրակի ետեւից ազատ ձգած ծայրերով գլխանոցը տալիս էր նրա աղւամաղով նոր ծածկած մոյգ-կարմիր աչրական դէմքին մի վայրենի գեղեցկութիւն ու կորով։

Երկու ձիապաններն էլ, ինչպէս և առհասարակ բոլոր Լազուտանի հայերը, խօսում էին իրար հետ տաճկերէն։ Հայերէն մի քանի խօսք գիտէին, այն էլ սովորել էին ս. Կարապետ գնացող ուխտաւորներին յաճախ իբրև առաջնորդներ ուղեկցելուց։

Երկուսն էլ առանձին գիւղերից էին, Տրապիզօնից շատ մօտ Լազուտանում բաւական հայեր կան, որոնք տարիներով ապրելով մոլեռանդ տաճիկների հետ խառն, մայր երկրից անջատւած, անխնամ կրօնական—կրթական կողմից՝ կամաց կամաց մոռացել են իրանց մայրենի լեզուն, ինչպէս այդ արել են Վրաստանի հայերը վրացիների մէջ ապրելով։ Լազուտանի այժմեան հայերը միայն հայ են իմացւում իրանց անուններով և դեռ պահպանած կապով եկեղեցու հետ։ Մի քաջ ևս՝ և նրանք կ'անցնեն այն աստիճանը, որ անցել են արդէն հազարաւոր հայեր դարերի ընթացքում, մահմեդականանալով իսպառ։ Ափսո՛ս, որ մի այդպիսի առողջ, ուժեղ, քաջ տարր, Թիւրքիայի հայ առաջնորդների և կառավարող դասի անհոգութեան շնորհիւ, կորչում է հայութեան համար։ Տրապիզօնին մօտ, Պօլսից ճանապարհը դիւրին, Բաթումը կողքին—միայն մտածող, գործող է պէտք...

Կէսօրին հասանք Իլիջա գիւղը, որը Երզրումի վիլայէթի, Երզրումի սանջակի, Օվա կամ Կարնոյ դաշտ ղէզէյի վարչական կենդրոնն է և նշանաւոր է ծծմբային տաք աղբիւրով: Այդ ղէզէյն բաժանուում է 15 նահիէի ¹⁾, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած է մօտ 10—12 գիւղերից, մեծ մասամբ խառն հայու տաճիկ բնակիչներով: Օվա ղէզէյից դէպի արևելք սահմանակից է նրան Բասեան, որով մենք անցանք մինչև Երզրում հասնելը, արևմուտք՝ Դերջան, հարաւ-արևմուտք՝ Փղի (Կեղի), հիւսիս-արևմուտք՝ Բայբուրդ ղէզէները:

Իլիջա հասնելով իջևանեցինք քարից ու ցեխից շինած մի որջում, որի կողքին միևնոյն ծածկոցի տակ ուղտերի համար շինած գոմերն էին գտնուում: Այդ խանի առջև կանգնել էր ուղտերի քաւանը: Հերթով չօքեցնում էին այդ կենդանիներին «քխս» ձայներով, քակում չւանները, բեռներից ազատում հլու կենդանիներին, և կրկին վերկացնելով տանում ընդարձակ գոմերը, ուր նոյնպէս բոլորին չօքեցնում էին և կերակրում:

Խանի օդան, որ յատկացրած էր ճանապարհորդների համար, մի փոքրիկ սենեակ էր, ճախարակաւոր կեղտոտ դռնով, հողի յատակով, կաւով ծեփած պատերով, ծուխից սևացած գերաններով, և թղթով ծածկած դռնակներով: Օդալի մի ճակատին գտնուում էր գետնի յատակից մի քիչ բարձր տախտակամած ու ճաղերով շրջապատած տեղ. այդ պատուաւոր անկիւնը ծածկած էր խասիրով: Օդալի մէջ տեղում սօբան էր, վրան դրած զահէաման ու չայդան, որոնցից խանչին առաջարկում էր մեզ զահէ կամ թէյ, մի բաժակի կամ Փինջանի համար 10 փարա (2¹/₂ կոպ.) պահանջելով: Ես ունէի հետո պատրաստութիւններ. ուստի պատուիրեցի ինքնանու:

Դուրս գալով այդ ողորմելի գիւղաքաղաքից և մի քանի ժամ ճանապարհ գնալուց յետոյ՝ հասանք մի ամալի, ձիւնապատ տափարակի մէջ տեղում միայնակ կանգնած խան:

Ժամի 6 էր երեկոյեան: Մեր առաջնորդների ասելով մինչև միւս խանը դեռ շատ ճանապարհ կար և եթէ շարունակէինք գիշերը վրայ կը հասնէր երկիւղալի ճանապարհի կէսում:

1) Տե՛ս «Մուրճ»- № 7, երես 1010:

Իջանք ձիերից և բարձր դարպասով մտանք խանի ծածկոցի տակ: Ձախ երևում էր մի փոքրիկ, ճախարակաւոր, կեղտից սևացած դուռն, որը տարաւ մեզ օդան: Նոյն ծածկոցի տակ էին և ուղտերին յատկացրած գոմերը:

Մեր մտած սենեակը միայն մեծութեամբ էր քիչ զանազանւում նախընթացից: Եւ իմ ուղեկցի հետ միասին բռնեցինք տախտակամած բարձրաւանդակը: «Աջամ» խանչին դրեց մեր առջև կրակով լիք «մանդալը» և գցեց ինքնատուր:

Արդէն մթնել էր: Օդան կամաց կամաց լքելում էր ուշացած ուղևորներով: Բոլորը խեղճ, ցնցոտիներով ծածկած մարդիկ: Նուրսը ձիւն էր գալիս, և ուղևորները մոտեցելով օդան թափում էին իրանց շորերի վրայից ձիւնի քուլաները և խմբւում սօբայի շուրջ տաքանալու: Նրանք հանում էին իրանց թրջած տրեխները և գուլպաները ու չորացնում: գուլպաներից և տրեխներից բարձրացող առնուշահոտութիւնը բուրում էր մեր շուրջը...

Պատրաստւում էինք քնելու, երբ աղմուկով թափւեցին օդան մի քանի զինւած տաճիկներ, աւազակային դէմքերով: Նրանք բարեկամաբար ողջունում էին խանչուն, իբրև հին ծանօթին: Տեղաւորւելով լայն թախտի վերայ նրանք մինչև կէս գիշերը ինչ որ կիսաձայն խորհուրդ էին տեսնում իրար մէջ:

Մեր ձիապանների ասելով՝ դժբա յայտնի գողեր էին: Վատ եղանակը ստիպել էր նրանց ապաստան գտնել այստեղ: Վանեցին, չը նայած որ ականջները ծանր էին, իսկոյն հասկացաւ ձիապանների ասածը և երկիւղից սաստիկ անհանգիստ էր լինում: Ձիապանները հաւատացնում էին, որ գողերը չեն համարձակւիլ մեզ փնաս հասցնել, որովհետև կը վախենան իրանցից: Յովհաննէսը գնաց ձիերի մօտ քնելու, իսկ Սիմօնը մնաց օդայում:

Եւ առանց հանելու պառկեցի, և նիրհում էի: Ծանր, խեղդող օդից զլուխս սաստիկ ցաւում էր: Վերջապէս յոգնածութիւնից քուճա տարաւ և ես անցկացրի գիշերը գողերի, ձիապանների, ուղտապանների և աղքատների հետ միասին այդ որջում:

Մեզ դարձեցրեց ձիապան Յովհաննէսը: Դեռ բոլորովին մոլթ էր: Օղայում շատերը քնած էին: Մի ահագին փափախով պարսկաստանցի հիւանդ ուղտապան ընկել էր մէջքի վերայ դրան մօտ և տնքտնքում էր: Դրսից լսւում էր հեռացող քարւանի չափաւոր զողանջիւնի ձայնը: Նս առաջարկեցի նրան թէյ և նա օրհնելով առաւ ու խմեց:

Մութ դաշտում ենք: Ձիւնապատ գետինը և մոխրագոյն երկինքը չեն որոշում իրարից: Հեռու մեր առջևից լսւում են ուղտերի քարւանի բազմաթիւ զանգակների միաօրինակ զողանջիւնը և ուղտապանների տխուր երգը: Պարսկաստանի խորքերից դիմում էր այդ քարւանը Սև ծովի ափը, Տրապիզօն:

Ահա հեռուից նշմարւում է մի սև գիծ, որի ոլոր-մոլոր սլոտոյտները տեղ տեղ բոլորովին կորչում են սպիտակ բլրակների ետևից. քանի մօտենում ենք՝ այնքան ևս գծի դէպի մեզ դարձած ծայրը լայնանում է և երևում, որ այդ գիծը կազմւած է շարժւող առանձին առանձին մարմիններից՝ բեռնաւորւած ալյանդակ ուղտերից, որոնք իրար ետևից շարւած, համաքայլ առաջ են ընթանում:

Մենք շտապով անցնում ենք այդ կենդանի գծի կողքից, բայց դեռ երկար պէտք է գնանք, որ հասնենք քարւանի առաջի ուղտին: Ահա և նա, որը գերազանցում է բոլոր ուղտերից իւր վիթխարի կերպարանքով: Նրա ահագին բրդոտ ծուռ վզից կախւած է մի մեծ զանգակ, գլուխը և վիզը զարդարւած են բրդեայ գոյնզգոյն երկար թելերով ու փունջերով, ուլունքներով ու խխունջներով: Նրա կողքին քայլում է փափախակիր աջամը:

Արդէն լուսացել էր: Խճուղուց ձախ՝ ներքևում երևում էր թփերով ծածկւած մի հարթ տարածութիւն, որի միջով անցնում էին մի քանի բարակ գետակներ. դռքա, երևի, Եփրատի վտակներն էին: Տեղ տեղ պատահում էինք և ողորմելի գիւղեր՝ բնակեցրած աջարցիներով, որոնք վերջին առաւ-թրքական պատերազմից յետոյ դադարել էին Բաթումի կողմերից Թիւրքիա:

Կէսօրին մօտ էր, երբ կրկին սկսեց ձիւն, որի հաստ խաւը զժւարացնում էր ձիերին ազատ քայլել: Վերջապէս հասանք Աշխլա գիւղը, որը Իլիջ ա զէզէի 15 նա հիէնէրից մէկի վարչական կենդ-

րոնն է, այսինքն՝ միւղիր է նստում այդտեղ: Այդ գիւղը բաղկացած է մօտ 45 տներէից, գլխաւորապէս տաճիկներ:

Խանում մի քիչ հանգստանալով և կազդուրւելով շարունակեցինք մեր ճանապարհը, որը կամաց կամաց բարձրանում էր դէպի սարը: Մի տեղ Սիմօնը տաճկախառն հայերէնով պատմեց ինձ, թէ ինչպէս նոյն տեղում մի երկու տարի սրանից առաջ, երեկոյեան պահուն, Տրապիզօնից Երզրում գալիս, հինգ աւազակ յարձակեցին վրան. ինքը մենակ էր, անզէն և եղած չեղածը երկու ձի էին: Աւազակները հրացանի կոթով խփեցին գլխին և նա ուշաթափ ընկաւ, և երբ մի քանի րոպէից յետոյ աչքերը բացեց, աւազակները արդէն անյայտացել էին իրա ձիերով: Այդտեղից մի քանի քաջ հեռու գտնուում էր կօրդօնը, այսինքն՝ պահականոցը, որի զափթիները կամ գողերի և աւազակների ընկերներն են և երբէք չեն հոգում նրանց բռնելու, կամ այնքան վատ են զինւած լինում, որ կարող էլ չեն այդ անել: Կողոպտուած և վիրաւորուած ձիապանը գանգատներով ընկնում է Երզրումի և Տրապիզօնի դատարանները, բայց ի հարկէ ոչինչ գոհացում չի ստանում: Կրկին պէտք է աշխատէր, որ մի կերպ փող ճարի և ձիեր գնի իւր գործով պարապելու: Մինչ այդ պատմում էր՝ մենք արդէն հասել էինք «կօրդօնին», որ տաշուլի քարերից շինած մի փոքրիկ տնակ էր՝ մէջը մի զափթի բնակիցրած: Աւազակները ձմեռը քիչ են դուրս գալիս մեծ ճանապարհները. նոքա զարուն ու ամառ աշխատում են, իսկ ձմեռը մօտազայ գիւղերից մէկում վայելում են իրանց համար հանգիստ ու անդորր կեանք:

Ճանապարհը քանի գնում աւելի էր նեղանում: Սև ապառաժոտ լեռները երկու կողմից իրար մօտենում էին և ճնշում իրանց արանքում լեռնական մի փոքրիկ գետակ, որի մի ափով խճուղին էր փորած: Մենք գտնուում էինք Բռնիկապան ձորում: Երկու կողմի լեռների կոհակները կրկին իրարից սկսում էին հեռանալ և շրջանակաձև պատել մի բաւական ընդարձակ լեռնադաշտակ, որի հիւսիսակողմում մեր դէմ ու դէմ կանգնած էր իւր բուքերով սարսափելի ձիւնապատ Կօպ-դաղը և իբրև մի վիթխարի պատ բաժանում էր յայնկոյս գոնևող Բայբուրդի ղէզէն յայնկոյս գոնևող Կարնոյ դաշտից կամ Օվալից: Այդ սարի վրայով ոլոր-մոլոր պտոյտներով բարձ-

բանում է խճուղին մինչև գազաթը և իջնում նոյն օձապտոյտ ուղիներով ձորոխի հովիտը:

Կօպ-դաղի վերայ այնքան սաստիկ է լինում բուքը, որ երբեմն ուղտերի ամբողջ քարաններ իրանց ուղտապաններով սառում են, խեղդւում ձիւնի տակ: Անցեալ տարի 100 ուղտ իրանց ուղտապաններով խեղդւել էին և սառել բուքից: Այդ իսկ պատճառով մինչև անգամ տաճկաց կառավարութիւնը հարկաւոր էր համարել այդ սարի երկու հակառակ ստորոտներին էլ խաներ շինել: Այդ երկու խաները ամբողջ խճուղու վերայ միայն են, որ շինել է ինքը տէրութիւնը, և ժողովուրդը կոչում է Փաղի-Նահի խաներ: Երկուսն էլ տէրութիւնը տալիս է կապալով: Տաճիկ կապալառուները օգտւում են հանդամանքից և սարսափելի կերպով կեղեքում ուղտապաններին և ճանկորդներին, երբ դոքա բուքի պատճառով հարկադրւած են լինում մի քանի օր սպասել մինչև սարը հանդարտւի: Այն ժամանակ շատ մեծ զին են պահանջում խանչիք ամեն մի շնչին բանի համար: Թէ որքան ձեռնտու են այդ խաները՝ երևում է նրանից, որ կապալազինը տարեկան 350 ոսկի է (մօտ 3200 բուբլի) մէկի համար:

Ժամի 5 էր երեկոյեան, երբ մենք հասանք սարի ստորոտում միայնակ գտնուող վերույշեալ երկու խաներից առաջինը: Փաղի-Նահի խանը ոչնչով չէր տարբերւում մեր մինչև այժմ տեսած մասնաւոր մարդկանց խաներից: Մեր բաղդից էլ այդ օր իջեանել էր այդտեղ մի գայմազամ, որ իւր ընտանիքը ֆուրգօնով Երզրում էր տանում, և բռնել էր խանի փոքր ի շատէ յարմար օդան. այնպէս որ մեզ տարան կոխեցին մի այնպիսի սարսափելի ծակ, որը մինչև մարդ չը տեսնի՝ չի կարող երևակայել:

* * *

Միւս առաւօտ, նոյեմբերի 23-ին՝ մութ-մութ՝ դուրս եկանք այդ խանից և սկսեցինք բարձրանալ Կօպ-դաղի վերայ: Ճանապարհը ոլոր-մոլոր պտոյտներով բարձրանում էր մինչև վիթխարի սարի մէջքը:

Բոլոր բնութիւնը թաղւած էր ձիւնի մէջ. մութ ցուրտ

գիշեր էր: Առջևից գնում էր Սիմօնը, քաշելով իւր ետևից բեռնած ձին ու ցոյց տալիս մեզ ճանապարհը, որ փորւած էր սարի լանջին, և դիզւած ձիւնի տակից հագիւ էր որոշուում:

Սկսում էր լուսանալ: Ճանապարհի ձախ կողմից սարն էր, որի լանջով բարձրանում էինք, իսկ աջ՝ միգապատ խորխորատներ և անդունդ: Մառախուղը արգելում էր տեսնել մի քանի քաջ առաջ: Հեռուից մեր դիմաց եկող կաթրչիների ձայները և նրանց ձիաների զանգակների ղողանջիւնը վրդովում էին մառախուղով և ձիւնով պատած այդ, կարծես, մեռած բնութեան լուռութիւնը: Մեզ պատահող ձիապաններից մեր առաջնորդները հարցնում էին, թէ սարը ի՞նչպէս է, և ստանալով պատասխան՝ «հանդիստ է» — ուրախացած առաջ էին քալում:

Մարդ սարսափում էր նայել ճանապարհի աջ կողմը դէպի մառախլապատ անդնդախոր ձորերը: Ահա՛ կրկին չափաւոր ղողանջիւն. կրկին պէտք է ուրեմն անցնենք ուղտերի անվերջ շարքի կողքով: Մառախուղի միջից սկսում են նշմարել այլանդակ կենդանիները, որոնք իրանց մոտ թաթերով մի նեղ շառաւիղ են բացել ճանապարհի մէջ տեղով, ձիւնի վերայ: Սիմօնը մինչև գոտին խրւելով ձիւնի մէջ՝ աշխատում էր անցնել այդ անվերջ շարքի կողքից, որպէս զի համարքայ քարւանի առաջը տանք և դուրս գանք ազատ ճանապարհը: Հարկաւոր էր, որ մի ուղտ խռտնեցնէր մեր ձին կամ սայթաքէր մէկիս ձին, որ գլորէինք միգապատ անդունդը:

Վերջապէս հասանք Կօպ-դաղի ամենաբարձր կէտը, ուր ճանապարհի կողքին գննւում էր խանի մի աւերակ: Արդէն սկսել էինք իջնել սարից:

Հիմա շրջապատող բնութիւնը բոլորովին այլ կերպարանք ունէր:

Զիւնապատ սարերը ծածկւած էին մշտադալար թփերով, որոնք հեռուից նմանում էին սևաբուրդ ոչխարների մի ցրւած հօտի: Աւելի ներքև սկսում էին պատահել և ծառեր՝ գլխաւորապէս վայրի խնձորենիներ և տանձենիներ: Անդնդախոր ձորերի միջով անցնում են փրփրալով լեռնական գետակներ: Ժայռոտ լեռների մերկ շերտաւոր կուրծքից կպած են մշտադալար նոճիների ու եղևինների թփեր: Զորի մէջ դիզւած են լեռներից պոկւած ահազին ժայռեր,

որոնք լեռնական գետակների ճանապարհը կտրելով աւելի ևս զայրացնում են նրանց և նոքա փրփրալով, գոչելով խփում են լալագին մնչիւնով ու անցնում, տանելով դէպի մայր ձորովս իրանց զանգառները: Իսկ ձորովս հասցնում է նրանց զանգառը Սև ծովը, որի լեռնանման ալիքների գոռոզ գոչիւնները անլսելի են անում խեղճի բողբոջի ձայները...

Ահա՛ և վերջին պտույտը, որով իջանք ու հասանք Կոպ-դաղի այս կողմում գտնուող Փաղի-Նահի խանը, ուր ժամուկէս հանգատանալուց ու կազդուրւելուց յետոյ, կրկին ճանապարհ ընկանք:

Այստեղից համարեա մինչև Տրապիզոն բոլոր ճանապարհը անցնում է մի խոր ձորով, որի երկու կողմից շարունակուող սարերը տեղ-տեղ իրարից հեռանալով կազմում են աւելի ընդարձակ դաշտեր, շրջապատած լեռներով: Մենք գնում ենք ձորովսի ափերով, որի հովիտը քանի մօտենում ենք Բայբուրդին, այնքան լայնանում է: Իսկ հզօր ձորովսը, ընթանալով արևելքից արևմուտք, յանկարծ մի տեղ անկիւն է կազմում և դիմում դէպի հիւսիս. նրան հետևում են և երկու կողմի սարերի կոհակները: Ահա՛ նոյն իսկ այդ անկիւնում երևում է ծառերի մի խումբ, որոնց ետևից նշմարւում են սպիտակ և մոխրագոյն տներ հարթ կտուրներով. դա Բայբուրդն է, հայոց Բաբերդը:

Մտնելով քաղաքը՝ անցանք նրա ծուռ ու մուռ, նեղ փողոցներով ողորմելի տնակների առջևից, և կանգնեցինք անտաշ քարերից և ցեխից շինած մի երկարկանի տան դարպասների առջև. այդ խանում պէտք է գիշերէինք: Ներքևի յարկում զետեղւած են ախոռատները, իսկ փայտի սանդուղքներով բարձրանում էք վերևի յարկը, խանի օդան:

Բայբուրդ քաղաքի այդ հիւրանոցի միակ սենեակում և՛ ինքը խանչին էր քնում, և՛ նրա ծառաները, և՛ եկւոր հիւրերը. նոյն տեղ ինքնաեռն էր դրւում, զահէ ու ճաշ պատրաստւում: Այդ փոքրիկ սենեակի երկու պատերին կից լայն թախտեր էին դրած: Սենեակը ունէր երեք մեծ պատուհաններ ծածկւած թղթերով, որոնց մէջ տեղ-տեղ ծակել էին և ապակիի զանազան ձևի կտորտանքներ կպցրել: Երևում էր, որ այդ երկրում ապակիի ամեն մի չնչին կտորը մեծ գին ունէր, իբրև հազւագիւտ մի իր:

Եւ լսել էի, որ Բայբուրդի վիճակի առաջնորդն ռուսահայերիս ծանօթ Ամբրոսիոս վ. Ռուբէնեանն է, որ մօտ տաս տարի առաջ ժողովարարել էր բաւականին մեծ գումար Թիւրքա-Հայաստանում մի երկրագործական ուսումնարան բանալու նպատակով: Յանկացայ տեսնել Հայր սուրբին, մտածելով գուցէ մի նոր բան իմանամ բաց-ւելիք ուսումնարանի մասին:

Մի հայ դարբին համաձայնեց ինձ տանել առաջնորդի մօտ:

Երեկոյ էր: Նեղ, մութ, ծուռ ու մուռ զառիվայրներով հասայ առաջնորդարանը: Յայտնեցի ծառայի միջոցով Հայր սուրբին, որ մի ռուսահայ ճանապարհորդ ցանկանում է մի քանի րոպէ տեսնել հետը:

Նրբանցքի դուռը բացւեց և ես մտայ մի ընդարձակ սենեակ, որ լաւ տպաւորութիւն էր թողնում մարդու վերայ իւր պարզութեամբ և մաքրութեամբ: Սպիտակ մերկ պատեր, լուսաւոր մեծ պատուհաններ, առանց ներկի մաքուր հասարակ տախտակամած, սենեակի մէջ տեղում մի մեծ գրասեղան ծածկած կանաչ մահուդով, շուրջը մի քանի նստարաններ — ահա՛ սենեակի բոլոր զարդարանքը: Ինձ դիմաւորեց ալեգարդ գլխով ու մօրուքով և համակրելի դէմքով մաքուր հագւած մի առողջ վարդապետ. դա ինքն էր Հայր Ամբրոսիոսը:

Մեր խօսակցութիւնը աննկատելի կերպով անցաւ երկրագործական ուսումնարանի վերայ:

Հայր սուրբը Ռուսաստանից վերադառնալով՝ մտադիր է եղած Կարնոյ իսկ գաւառում բանալ իւր դպրոցը, աչքի առաջ ունենալով նախ՝ որ այդ գաւառը հայաշատ է և նրա ժողովրդի գլխաւոր զբաղմունքը երկրագործութիւնն է, երկրորդ՝ որ զանաւում է կանոնաւոր ճանապարհի վերայ, Եփեսոս որ Տրապիզոնով Եւրոպայից կարելի էր հարկաւոր դործիքները և ուսումնարանական նպաստները հեշտութեամբ ստանալ: Հայր Ռուբէնեանը խնդրել էր այն ժամանակեայ Կարնոյ առաջնորդ Օրմանեան սրբազանից յանձնել իւր վիճակի վանքերից մինի վանահայրութիւնը իրան, որպէս զի բաց անի այնտեղ իւր տեսչութեան ներքոյ երկրագործական ուսումնարանը և, իբրև թէ, ոչ Օրմանեանը, ոչ էլ Կարնոյ ազգային վարչութեան անդամները համաձայնել են նրա պայմաններին: Այն ժամանակ հ. Ամբրոսիոսը փորձում է Մուշի ս. Կարապետում բանալ, բայց տեղն ու տեղը ծանօթանալով հանգամանքների հետ, զայիս է այն կորակա-

ցութեան, որ անհնարին է այնտեղ բանալ. նախ՝ որովհետեւ այդ վանքի կողմից ու բերառ ուսումնատեաց և կարգ ու կանոնի հնազանդւելու անսովոր վանականները բոլոր ջանքերով դէմ կը լինէին մի այդպիսի ուսումնարանի և վանահօր, իսկ երկրորդ՝ ապագայ դպրոցի վար ու ցանքերը ու հօտերը ապահով չէին լինի քրդերի հրոսակների յարձակումներից: Իսկ Վանայ կողմերում չէր փորձել, որովհետեւ Հայրիկը ունէր բացած վարագայ վանքում մի նույնատեսակ դպրոց, որը փակած է այժմ:

Այսպէս ահա՛ բուն Հայաստանի սրտում նա տեղ չը գտնելով իւր ուսումնարանի համար, մտածում է զոնէ Հայաստանի սահմանի վերայ, Բայբուրդի վիճակում, իրագործել իւր փափագը: Ընտրւում է առաջնորդ այդ վիճակի, որի վանքերից մէկում ժողովրդի օգնութեամբ հիմքն է դնում ուսումնարանի շինութեան: Բայց Պօլսի Ազգային ժողովը՝ հազար ու մի մանրակրկիտ բացատրութիւնների, զբաւոր ղեկուցումների, ծրագիրների ու այլ պոլսեցիների գործավարութեան յատուկ շփականական խորախորհուրդ գրութիւններով և տեւից ընկած՝ այնքան տանում-բերում է հայր սուրբին, որ թէ նոր սկսած շինութիւնը քայքայւում է, և թէ ապագայ աշակերտների համար նիժնիյ-նովգորդի տոնավաճառից բերած բլուզացուները ու զլսարկները զողացւում են, փողերը ձիւնի պէս հալւում... մնացածով մնում է արդէն աւելի փոքր ծրագրով մի ուսումնարան բանալ...

Յանկանալով յաջողութիւն սուրբ հօր՝ ես դարբինի հետ վերադարձայ խանը, ուր կաթիլները, Մ. աղան, խանչին ու մի այլ տաճիկ նստած զրից էին անում:

Պատուհանների թղթերի ծակերի մէջ դրած ապակիի կտորները թույլ էին տալիս և քաղաքի տեսարանով հետաքրքրել: Ճորձի միւս ափին բարձրացող սարի զազաթին երևում էին հնադարեան բերդի աւերակներ:

Տաճիկներից մինը ցոյց տալով այդ աւերակները հարցրեց ինձ՝ արդեօք չե՞մ կարող գիր ա՛նել և գտնել այն ոսկեայ գանձերը, որոնք թաղնւած են այդ աւերակների տակ. առանց գիր անելու ով գնում է՝ դեւերը նրան յափշտակում են ու անյայտացնում:

Ես պատասխանեցի. — եթէ կարծում էք, որ գիր անելով կարելի

է գտնել այդ գանձերը, ինչո՞ւ այսքան ժամանակ չեն փորձել ձեր տաճիկ խօջանները ու մօլլանները, որոնք շատ իմաստուն են այդ տեսակ բաներում:

— Փորձել են՝ չի յաջողւել. դու աւելի ես կարգացած, կախարդութիւններ ու «Ֆանդա»-եր աւելի կ'իմանաս, եղաւ պատասխանը:

✕ Խօսակցութիւններից իմացայ, որ Բայբուրդ քաղաքը ունի մօտ 3000 տուն բնակիչ, որոնցից միայն 500 տուն հայ են, մնացածը՝ տաճիկ և շատ քիչ թւով յոյներ: Հայերը ունին մի երկսեռ վարժարան՝ մօտ 400 աշակերտներով: Քաղաքիս բոլոր արհեստները հայերի ձեռքում են: Բայբուրդ ղէզէն, Խալիրի (Բայբուրդից հիւսիս-արևելք) և երկու այլ աննշան ղէզէներ (Կեալկիթ և Շէյրան՝ Բայբուրդից արևմուտք) միասին կազմում են Երզրումի վիլայէթի Բայբուրդ սանջակը կամ միութեսարիֆլըղը: Այս վիճակում հայերի թիւը տաճիկների հետ համեմատած քիչ է: Ամբողջ վիճակում հայաբնակ գիւղերի թիւը հազիւ լինի 40: Սակայն բազմաթիւ հնութիւնները ցոյց են տալիս, որ նախնի դարերում հայերը բաւական տարածւած էին այս կողմերում՝ հին Բարձր-Հայքի հիւսիսային սահմաններում և Սաղտեաց աշխարհում: Այս կողմերից դէպի հիւսիս քանի զնում է՝ զօրանում է տաճիկ, յոյն ու լազ ազգաբնակչութիւնը և նւազում հայերի թիւը, որոնք պատահում են այսուհետև համարեա միմիայն քաղաքներում: Երզրումից հարաւ, ընդհակառակը, տաճիկները նւազում են և պատահում են քաղաքներում, իսկ հայերի ու քրդերի թիւը ստւարանում է:

Ձանձրանալով խօսակցութիւնից, ես քաշւեցի մի անկիւն և պառկեցի հանգստանալու: Յանկարծ դուռը բացւեց և օդան մտան երեք տաճիկ զինւորականներ խրոխտ քայլւածքով ու զետնից քաշւող սրերի աղմկալի շառաչիւնով: Բոլորը, բացի ինձից, վեր թռան իրանց տեղերիցը և մեծ յարգանքով բարևեցին նրանց: Երեք «ասկեր» (զինւորական) էֆէնդիներից մէկը նստեց այն թախտի վերայ, ուր ես էի պառկել: Սիւնների սուերները ծածկում էին գլուխս և միայն երևում էին ոտքերիս երկայն կօշիկները, որոնց մօտ նստել էր խրոխտ տաճիկը: Նրա պատուասիրութիւնը վիրաւորւած էր իմ կօշիկներիս տեսքից. բարձրացրեց թուրը ու ոտներիս կպցնելով կոպիտ կերպով նկատեց.

— Քաշի՛ր ոտներդ, ի՞նչ ես ձգւել. չե՞ս տեսնում ո՛վ է առաջիդ նստած:

Ես չը շարժւեցի տեղիցս և, զսպելով բարկութիւնս, նկատեցի.

— Տեսնում եմ և չեմ խանգարում նստել: Զը համարձակէք միւս անգամ ինձ դիպչել: Խանի օդան ընդհանուրի է. այս անկիւնի համար ես վճարում եմ և նա իմն է. ես կարող եմ պառկել և հանգստանալ, որքան քէֆս է: Ոչ միայն դուք, այլ և փաշան իրաւունք չ'ունի պահանջել, որ ես նրա ներս գալով ցատկեմ տեղիցս ու երկրպագութիւն տամ. այդ կարող էք պահանջել նրանից, ով սովոր է կատարել այդ տեսակ պահանջներ: Ես ոչ ոքի չեմ խանգարում և թոյլ չեմ տալ ինձ ևս անհանգստացնել:

Վանեցին լեղապատառ եղած աղաչում էր կատարել տաճկի հրամանը. մի՞թէ կարելի է տաճկի, այն էլ ասկեարի պահանջին ընդդիմանալ: Ես խնդրեցի իմ մասին չը մտածել, և պահանջեցի իմ առաջւայ դիրքը:

— Ես ասկեար եմ, իմ առջև չի կարելի ոտները ձգել, կրկնեց բարկացած տաճիկը, ձեռքերով բռնելով ու թափահարելով կօշիկներս:

Ես այլ ևս չը կարողացայ զսպել կատաղութիւնս, ցատկեցի տեղիցս և հանեցի ընկալիչներս: Այդ շարժումը, կատաղութիւնից խեղդուող ձայնս, փափախս ու օտար երկրացո՛ւ հագուստս և սպառնալիքս՝ խնդն հեռագրել Երզրում ռուսաց հիւպատոսին, շարացրին ինքնավստահ տասնապետներին:

Այլ ևս իմ բոլոր ծանր խօսքերին նրանք չէին պատասխանում. մի քանի բոլկից յետոյ հեռացան, կանչելով խանչուն, որը վերադառնալով օդան յարգանքով յայտնեց ինձ, որ «ասկեարները ներողութիւն են խնդրում, չը գիտէին, որ դուք այն մարդն էք, որի մասին երկու օր առաջ Երզրումի պօլիցիալից այստեղ հեռագիր էր ստացւած՝ տեղեկացնել իրանց ռուսաստանցի... (անունս) տեղ հասնելը և ե՞րբ, ո՞ւր ճանապարհ ընկնելը»:

Վանեցի վաճառականը չէր հաւատում, որ ամեն տեղ, բացի Տաճկաստանից, մարդ իրաւունք ունի իւր անձը ու պատիւը պաշտպանելու: Նա գլուխը շարժում էր, երբ ասում էի թէ՛ ոչ միայն մի որ և է տասնապետ, այլ նոյն իսկ մի զենեքալ Ռուսիայում թոյլ չի

տալ իրան մի այնպիսի լիրբ վարձուք պատի կայարանում, որ կարելի է նմանեցնել իրանց խաներին: Ոչ մի ծառայող չի էլ մտածել պահանջելու, որ, երբ ինքը մտնում է պատի կայարանի սենեակը, բոլորը վեր կենան իրանց տեղերից և յարգանքով՝ ողջունեն իրան:—«Ձէ, եղբայր, մենք չենք կարայ ատ տեսակ բաներ ընել. տաճկահայատակը որ կայ՝ ոչ միայն ամեն մի միւղիրի, այլ ամենավերջին տաճկի ճորտն է: Դուք կարող էք ձեզ ազատ զգալ, ունենալով ձեզ օգնական ու սլաշուպան ուս Տիւպատոսը, իսկ մենք ո՛վ ունինք:» Եւ խեղճը արտասուքը աչքերին պատմեց թէ՛ ո՛րպիսի նեղութեան մէջ է Վանի ժողովուրդը: Ինքն էլ մէկը այն հաղարներից: Նրա 16 տարեկան եղբորը ուղարկել են Ափրիկէի խորքերը յաւիտենական աքսոր: Նրա ծեր հօրը Պօլսից են հեռացրել, այդպիսով մեծ հարւած հասցնելով իրանց առուտուրին և հիմա ինքը, որ ականջների հիւանդութեան պատճառով 15 տարի պանդխտութիւն չէր քաշել, ստիպւած է թողնել տուն, երեխայք և դիմել Պօլիս՝ հօր հեռանալուց խանդարւած գործերը զլուխ բերելու:

* * *

Դեռ լոյսը չը բացւած՝ թողինք քնած քաղաքը:

Անցնում էինք լայնածաւալ ձիւնապատ լեռնադաշտով, որ ծածկւած էր նոր նստած ձիւնի փափուկ սաւանով: Տեղ տեղ երևում էին հայոց գիւղեր: Ահա՛ մենք անցնում ենք նրանցից մէկի կողքով. դա Վարդաղան գիւղն է: Տեսէ՛ք այն փառահեղ աւերակները, որ նայում են իրանց կիսակործան բարձրութիւնից ձեզ վերայ. դրա հին հայոց փառաւոր վանքերի ու եկեղեցիների բեկորներն են: Նայէ՛ք այժմ՝ նրա կողքին խմբւած հայ գիւղացիների խրճիթներին. ոչ եկեղեցի էք նշմարում, ոչ էլ փայտեայ անշուք զանգակատուն անգամ:

Կէսօրին բարձրացաւ սաստիկ բուք, որից ապաստանւեցինք, հասնելով ամալի դաշտի մէջ տեղում միայնակ կուչ եկած մի ողորմելի խան, որի տեսքը զաղափար էր տալիս թէ՛ ինչպէս էին կարող նախապատմական դարերում մարդանման կապիկներից իրանց զարգումով ոչ այնքան հեռու մարդիկ ցրտից պատասպարւել:

Մի քանի ժամ ևս՝ և այդ տաղտկալի ճանապարհը կը վերջանայ: Այժմ մենք գնում ենք մի նեղ ձորով, որի միջով տերևազուրկ ուռենիների թփերի տակից, քարերի վրայով ցատկոտելով վազում է կարկաչահոս սրընթաց մի վտակ: Ձորի երկու կողմից բարձրանում են սև ապառաժոտ լեռներ, կրելով իրանց մուսլ ալեզարդ կուրծքերին կպած մշտադալար թզուկ եղևիններ, վայրի խնձորենիներ ու տանձենիներ: Աջ կողմի սարերի լանջով փորած է ճանապարհը:

Երեկոցան հասանք ճանապարհի կողքին դռնուղ մի խան, ուր և իջևանեցինք: Տաճկաստանի ճանապարհների խաները լուսաբանող երևույթներից մինն են, եթէ մէկը այնքան կոյր լինի, որ չ'իմանայ ուրիշ երևույթներից այդ երկրի յետընկածութիւնը և տնտեսական սարսափելի վիճակը:

Ես հաւատացած եմ, որ քաղաքակիրթ երկիրների պատւելի հաւերնու աքաղաղները սաստիկ տրտունջ և բողոք կը բարձրացնէին, եթէ նրանց փակէին այնպիսի նկուղում, որպիսին էր այս խանի օդան: Կռելով ձեր վիզը մանում էք փոքրիկ դռնից մի նեղ, ցած կաւեայ արկղիկ, առանց ամենաշնչին անգամ ծակի դէպի լոյս աշխարհը: Պատերից մէկում մխում է առանց ապակիի փոքրիկ նեւթի մի լամպա: Փոքրիկ օդայի օդը կարծես շիկացած լինի վառւած սօբայից: Դժարութեամբ և կրծքի ու գլխի սաստիկ ցաւով կարողանում է անսովոր մարդը շունչ քաշել: Խոնաւ գետնին տարածւած էին 6—7 ճանփորդներ: Նրանք սովոր են այդ բոլորին, գուցէ չեն էլ երեւկացում, որ Ալլահի ստեղծած աշխարհում ալլապէս էլ է կարելի ապրել: Տեսէ՛ք ինչպէս զարմացած զարմացած նայում են ինձ վերայ նոքա, երբ ես իմ ճանապարհորդական ամանովս ջուր եմ տաքացնել տալիս և թէյ պատրաստում:

Աղքատ, ողորմելի ճանփորդներից մէկը մի համակրելի հայ երիտասարդ էր, Բայբուրդի շրջակայ գիւղերի մէկից: Նա հայերէն վատ գիտէր, ինչպէս առհասարակ այդ կողմի կիսատաճկացած հայերը: Նա վերադառնում էր Պօլսից: Երեք տարի է արդէն ինչպէս թողել է իւր նորապսակ հարսին և դիմել պանդխտութեան, նախ Բաթում, ապա Պօլիս, հազար ու մի զրկանքներով մի քանի փարա վաստկելու: Նա հիմա վերադառնում է իւր ընտանիքը մի քանի ամիս հանգիստ առնելու, որպէս զի կրկին պանդխտութեան ցուպը

տեղիցը շարժի: Եւ միայն նա չէ այդպէս, տասնեակ հազարաւորներ են հայ պանդուխտները: Հողի պակասութիւնը կամ երկրի տնտեսական յառաջադիմութեան պահանջը չէ, որ մղում է այդ թշուառների խմբերը իրանց մայր հողից դուրս, օտար աշխարհներ: Երկրիս անկարգ դրութիւնը մեռցրել է նրա տնտեսական կեանքը և այդ անկանոն, քայքայած վիճակի արգասիքն է այդ պանդխտութիւնը: Նոյն երկրում գործ չը կայ, ճանապարհներ չը կան, արտահանութիւն չը կայ, իսկ տուրքեր ու հարկեր՝ օր աւուր բազմանում են, պարտքերը խեղդում: Ո՞ւր համար ցանի, հնձի գիւղացին, երբ նրա բերքերը գնող չը կայ, նրանց արտահանելու միջոց չը կայ. փչացնողին պատիժ չը կայ, լիբ բափշտակողին արգելք չը կայ: Ո՞ւր համար աշխատէ, կատարելագործէ արհեստաւորը, երբ նրա պատրաստածին փող տուող չը կայ: Խնչպէս չը դիմէ հեռու աշխարհներ բանւորը, երբ իւր երկրում գործ չը կայ, գործարան չը կայ: Ո՞րտեղից վերցնի հարկերի համար փող, երբ իւր երկրում փող աշխատելու ազգիւր չը կայ:

Իրանք տաճիկները անընդունակ են բարւոքելու այդ երկրի դրութիւնը, որովհետեւ այդ միւլնոյն է, որ պահանջներ են դրից թէ՛ ինչո՞ւ երեսիդ մորթը սպիտակ չի: Իսկ ինչ վերաբերում է գերմանացի կամ անգլիացի կապիտալիստների ձեռնարկութիւններին Փոքր-Ասիայում, — այդ բոլորից համարեա ոչինչ օգուտ տեղական ազգաբնակչութեան, շահւողը նոյն գերմանացին կամ անգլիացին կը լինի, որոնք Ասիայում էլ պիտի վայելեն իրանց սեպհական օրէնքների հովանաւորութիւնը: Նոքա իրանց երկրում կը ստանան այն գիտութիւնը ու պատրաստութիւնները, որ հարկաւոր են այստեղի կեանքի մրցման համար. և այն ժամանակ նոցա փողի, գիտութեան ու անձնական ապահովութեան առջիւ ի՞նչ են աղքատ, տգէտ, օրէնքի ու արդարութեան պաշտպանութիւնից զուրկ, կամայականութեան մատնւած տեղացիները, որ շատ շուտ կը դառնան բեռնակիր գրաստներ եւրոպացիների համար, միայն ոչ օտար, այլ սեպհական երկրում:

Գիշերը անցկացրի այդ անտանելի բնի մէջ, ուր իրար վրայ թափւել էին գիշերելու հաւաքւած հեռու տեղերից ճանապարհներ և մաւրացիներ: Նրանցից ամեն մէկը հանում էր իւր տրեխները ու

գուլպաները ու չորացնում, և առանց այն էլ ապականւած օդը դժոխային դարձնում: Ես իբրև փրկութեան սպասում էի այն րոպէին, երբ լոյս աշխարհ դուրս կը գամ այդ դժոխքից:

Նոյեմբերի 25-ին դեռ մութը պատած էր այդ ահռելի ձորը, երբ մենք արդէն ձիերի վերայ նստած ճանապարհ էինք գնում:

Կաթրչի Յովհաննէսի ասելով, Բայբուրդի կողմերի հայերը շատ են անարգւում մոլեռանդ տաճիկներին:

— Իսկ ձեզ, լազ հայերիդ, զեափուր չե՞ն ասում, հարցրի ես:

— Մեզնից վախենում են: Մեր կանայք նոցա տղամարդկանցից սրտոտ են:— Եւ նա պատմեց ինչպէս մի հայ լազ կին տապարով սպանել էր մի քանի տաճիկ զոդերին, որոնք գիշերը մտել էին նրա տունը: «Մեր կողմի ուռումները (յոյն), շարունակեց նա, շատ վախկոտ են: Նրանք պատերազմից յետոյ շատ զաղթեցին Ռուսիա՝ Կարսի կողմեր:»

— Իսկ դու ինչո՞ւ էիր գնացել Ռուսիա, հարցրեցի նրան:

— Ստակ վատկելու: Կերչի մօտ կապալով հօդ էի վերցնում, դեսեառիներն վճարելով մօտ 25 րուբլի, վարում էի ցորեան, գարի, կաղամբ, զետնախնձոր և ստացած բերքերը տեղն ու տեղը վաճառում:

— Ինչո՞ւ. մի՞թէ Տաճկաստանում հօդ չը կայ:

— Հօդ՝ որքան կամիս, միայն բերքերը գնող չը կայ, ժողովուրդը աղքատ է, փող չ'ունի, առուտուր չը կայ, գործ չը կայ:

— Շատե՞րն են ձեզանից գնում Ռուսիա:

— Այնտեղի ծովեզրեայ բոլոր քաղաքներում լիքն են մերոնք: Շատերն չեն էլ վերադառնում, այնտեղ պսակում են ոռոս աղջիկների վերայ ու մնում: Է՛հ, ես էլ սկի չէի վերադառնալ, թէ կին, երեխաներ չ'ունենայի: Մի թուլթուն ցանել ունէինք՝ էն էլ հիմա Րեժիի ձեռքն է անցել:

Խօսքը ֆրանսիական Րեժի ընկերութեան մասին էր, որ Թիւրքիայում ծխախոտի մենաշնորհում (մօնօպօլի) է ստացել. ոչ ոք, բացի այդ ընկերութեան, թուլթուն չի կարող պատրաստել և ծախել:

Րեժին ունի մաքսանենգներին (կօնտրաբանդիստ) բռնելու համար մի ամբողջ կազմակերպւած խումբ: Յաճախ է պատահում մաքսանենդ լազերի ու Րեժիի զինւած մարդկանց մէջ արիւնահեղ

ընդհարումներ: Այդ մենաշնորհումը ահագին նիւթական փնա-
հասցրեց Թիւրքիայի ժողովրդին:

Աննկատելի կերպով լուսացել էր. մենք դեռ խոր ձորով էինք
ընթանում: Երկու կողմից սեպացած էին ահռելի բարձր ապառա-
ժոտ լեռներ: Զորի վերջում, սարի դագաթին սրաթե արծւի թը-
ռիչքին միայն մատչելի տեղում, աջ կողմից, բերդի աւերակ էր երե-
ւում: Ժողովուրդը նրան կոչում է Քեօթոլլու բերդ, տալով իւր սիրած
հերոսի անունը ամեն մի անառիկ բերդին: Իւր բարձր զիրքով նա
իշխում էր ամբողջ ձորի վերայ և իբրև մի պահապան հսկում էր
այն ձորի մուտքը, որով մտնում էինք Հայաստանից հին Պոնտոսը,
— այժմեան Տրապիզոնի վիլայէթը:

(Կը շարունակւի)